



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 08 » 09 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0130-22

Ձեռնարկողը՝

«Ար-Մեդալս» ՍՊԸ

ք. Երևան, Եղվարդի խճուղի 8/2

Գործունեությունը՝ Սյունիքի մարզի Մեղրասարի ոսկու հանքավայրի արդյունահանման /արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում/ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

սանիտարահիգիենիկ պայմաններ ստեղծելու համար նախատեսվում է շոգ և չոր եղանակներին կատարել ինտենսիվ փոշենստեցում փոշեառաջացման օջախները ինտենսիվ ջրելու միջոցով:

Բացահանքերի խորը հորիզոնների համար նախատեսվում է արհեստական օդափոխություն: Փոշենստեցումը և օդափոխությունը բացահանքերում նախատեսվում է կատարել ՄՄՊ-1 մակնիշի օդափոխող-ռոռոզող կայանքով:

Բացահանքի փոշենստեցումը կատարվում է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու և փոշեառաջացման օջախները ջրելու համար: Խմելու ջուրը բերվում է BL-1.2 մակնիշի կցովի ջրի ցիստեռնի, իսկ տեխնիկական ջուրը-ՄՄՊ-1 մակնիշի օդափոխող-ռոռոզող կայանքով:

Ստորգետնյա հանքի տարեկան արտադրողականությունն ըստ ապրանքային հանքաքարի նույնպես ընդունված է 50հազ.տ:

Սույն աշխատանքային նախագծով նախատեսվում է երկրաբանահետախուզական փորվածքների լայնացում և վերականգնում: Այդ աշխատանքների կատարման, ինչպես նաև նոր փորվածքների անցման համար նախատեսվում է ինքնագնաց մեքենաների կիրառում: Ինքնագնաց մեքենաների կիրառումն ապահովում է ինչպես հանքավայրի ստորին հորիզոնների բացման, այնպես էլ շահագործման աշխատանքների կատարմանը: Հանքաքարի տեղափոխումը դեպի մակերևույթ իրականացվելու է ստորգետնյա ավտոինքնաթափով:

Հանքավայրի շինարարության և շահագործման համար անհրաժեշտ բոլոր ստորգետնյա լեռնային փորվածքների անցումը նախատեսվում է կատարել հորատապայթեցման աշխատանքների կիրառմամբ:

Ընկերությունն իր պատրաստականությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքների ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքների բյուջե:

Շահագործվող հանքի տարածքը չի առնչվում էկոլոգիապես զգայուն տարածքների՝ վայրի բնության, կամ այլ արգելոցի, ազգային զբոսայգու, կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ: Բնության հուշարձաններից ամենամոտը՝ «Մեղրիի սոսի» հուշարձանն է քաղաք Մեղրիում, հեռավորությունը՝ 25կմ:

Ռեկուլտիվացիայի աշխատանքները նախատեսվում է կատարել երկու փուլով՝ տեխնիկական և կենսաբանական: Տեխնիկական ռեկուլտիվացում նախատեսում է.

-Բնական դրենաժի վերականգնում, թեքությունների ամրացում, մակերեսների հարթեցում և պատրաստում բույսերի ցանքի համար, մերձատար ճանապարհների քանդում:

Ռեկուլտիվացման կենսաբանական փուլը նեռարում է տեղանքին բնորոշ հողամրացնող բուսատեսակների ցանք: Նախընտրելի են գազերը, հացազգիները, լոբազգիները՝ *Koeleria cristata*-Բարակոտնուկ սանրանման, *Polygonum aviculare*-Մատի-տեղ ճնճղուկի, *Bromus ariegates*-Ծորնուկ խայտաբղետ, *Trifolium campestre*-երեքնուկ դաշտային և այլն: Վերականգնվող տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 42.3հա, իսկ ռեկուլտիվացիայի ծախսերը կկազմեն՝ 18250 հազ. դրամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 140.0 հազ.դրամ:

Հողային ռեսուրսների վրա ձեռնարկության տնտեսական գործունեության հետևանքով



առաջացած ազդեցությունը գնահատվում է 518.587 մլն. դրամի՝ 1 տարվա կտրվածքով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Բացառել բացահանքերի շահագործման ընթացքում արտադրական և կենցաղային կեղտաջրերի արտահոսքերը բաց ջրային ավազաններ:
- Բացահանքերի շահագործման ամբողջ ժամկահատվածում կատարել մթնոլորտ փոշու արտանետումների մշտական մոնիթորինգ, ինչը թույլ կտա ժամանակին խուսափել շրջակա միջավայրի աղտոտումից:
- Արգելվում է հատկացված տարածքից դուրս խախտել լրացուցիչ տեղամասեր, տեղադրել թափոններ և այլն:
- Առաջացած թափոնները կուտակել հատուկ դրանց համար հատկացված հարթակներում:
- Հանքավայրի շահագործման ավարտից հետո անհրաժեշտ է իրականացնել խախտված տարածքների ռեկուլտիվացիա, ինչպես նաև իրականացնել կենսաբանական ռեկուլտիվացիա:
- Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- Մթնոլորտային օդի աղտոտման վերահսկման, պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, 24 ժամ տևողությամբ:
- Ջրերի նմուշառում և անալիզ շաբաթը մեկ անգամ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Սյունիքի մարզի Քաջարան և Մեղրի համայնքներում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Սյունիքի մարզպետարանը, ինչպես նաև «Արևիք» ազգային պարկը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ,



կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

- Պայթեցման աշխատանքների ժամանակ ապահովել անվտանգ հեռավորությունը համաձայն անվտանգության միասնական կանոնների (ԱՄԿ) թիվ 8 հավելվածի 1, 2 և 3 կետերում բերված պահանջների:

- Բացահանքերի շահագործման ամբողջ ժամակահատվածում կատարել մթնոլորտ փոշու արտանետումների մշտական մոնիթորինգ, ինչը թույլ կտա ժամանակին խուսափել շրջակա միջավայրի աղտոտումից:

ԵՐՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ատ-Մետալս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Մեղրասարի ոսկու հանքավայրի արդյունահանման աշխատանքների (արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝  Հովիկ Մեսրոպյան

